# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Հունիսի 1-ին, հինգշաբթի.- Խ. օր Ցինանց: Համբարձումն Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագի ավարտին, ի հիշատակ 1441 թ. Սսից Ս. Էջմիածին Հայրապետական Աթոռի փոխադրության, Իջման Ս. Սեղանի առջև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. Պատարագին ներկա էին նաև ֆրանսահայ մի խումբ ուխտավորներ՝ Շավիլի հոգևոր հովիվ Տ. Հարություն քհն. Թաշճյանի առաջնորդությամբ: Փարիզից Հայաստան ժամանած ուխտավորները նույն օրը հանդիպում ունեցան նաև Վեհափառ Հայրապետի հետ՝ արժանանալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությանն ու գրպեսլնդիչ խոսքին:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հիսուս Քրիստոսի Եկեղեցու» ներկայացուցիչներին:

***Հունիսի 4-ին, կիրակի.- Է. կիր.: Երկրորդ Ծաղկազարդ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագի ավարտին, ի հիշատակ Գրիգոր Խանջյանի, խոսք ասաց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, որից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ հոգեհանգստյան մասնավոր պաշտոն կատարվեց:

Ս. Պատարագին ներկա էին նաև հանգուցյալի հարազատներն ու բարեկամները:

***Հունիսի 6-ին, երեքշաբթի.- ԽԵ. օր Ցինանց:***

Այսօր, ժամը 14.00-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Ս. Պետերբուրգ մեկնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

***Հունիսի 11-ին, կիրակի.- Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Այսօր նոր ժողովուրդք, ցնծացէք ընդ գալուստ Հոգւոյն Սրբոյ, մեծացուցանելով զևլողն ի Հօրէ» (Շարական ) բնաբանով:

***Յունիսի 17-ին, շաբաթ.- Է. օր Հոգեգալստեան:***

Այսօր, երեկոյան, Ս. Պետերբուրգ կատարած այցելությունից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

***Յունիսի 18-ին, կիրակի.- Ա. կիր. զկնի Հոգեգալստեան: Սկիզբն Յարութեան Կիւրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն վրդ. Հեջինյանը: «Հայր մեր»-ից առաջ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

**Նույն օրը**, երեկոյան ժամերգությունից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ եկեղեցական թափորը, սկաուտների ուղեկցությամբ, Մայր Տաճարից ուղևորվեց դեպի Ս. Հռիփսիմե վանք, փանելով Ս. Կույսի մասունքն ամփոփող Աջը՝ ի երկրպագություն և ի օրհնություն հավատավոր ժողովրդի:

Սրբազան մասունքը տեղադրվեց Ս. Հռիփսիմե եկեղեցու խորանին, որպեսզի հավատացյալ հայորդիք առիթ ու հնարավորություն ունենան հաղորդակցվելու օրհնյալ Աջի հետ և շնորհազարդվելու նրանից ճառագող զորությամբ:

***Յունիսի 24-ին, շաբաթ.- Դ-Զ. Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:***

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Յունիսի 25-ին, կիրակի.- Բ. կիր. զկնի Հոգեգալստեան: Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը: «Հայր մեր»-ից առաջ երջանկահիշատակ Տ.Տ. Գարեգին Ա-ի հիշատակին նվիրված քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Մահը անգամ մը եւս կը խոնարհի իր յիշատակին առջեւ» բնաբանով (տե՛ս էջ 3):

Ս. Պատարագի ավարտին երջանկահիշատակ Տ.Տ. Գարեգին Ա-ի շիրիմի առջև հոգեհանգստյան պաշտոն կատարվեց: